Պարույր Սևակ

Requiem

Ա. ՆԱԽԵՐԳ

Իմ հոգու մեղկության, առօրեական ճղճիմ
Սին հոգսերի վրա թագավորող հավետ
Ո՛վ Առնական Ոգի.
Արհամարհիր մահը՝ այն դալկամիտ խեղճին,
Որ հագած ֆարաջան տերտերական խղճի,
Կտանի քեզ դժոխք, կամ դրախտ երկնավետ:
Կասկածո՞ւմ ես արդյոք, որ երբեք չի չոքի
Մահը հոգուդ վրա և աշխարհի վրա,
Քանզի ինքը - մահվան արարչական ոգին
Ամեն վայրկյան ցավով ծնում է, տե՛ս, նրան -
Կյանքի ահեղաճիչ առօրյա մանուկին...

Բ. ԳԻՇԵՐԵՐԳ

Առկայծում են երկնի ջահերը,-
Վառվում են իմ երկնային տաճարում...
Ա՛խ, մեռածը որքա՛ն ջահել է,
Որքա՛ն քնքուշ է, ինչպես գարուն...
Ա՛խ, մարած ու անլույս աչքերում
Կարծես արևն է այդ, որ մարել է.
Վարսերի հյուսքը զեփյուռ է բերում.
Ժպիտը՝ ամպերին զարդարել է...

Բայց այդ ո՞վ է, որ հարդարել է
Այդ վարսերը՝ հարուստ ու փարթամ...
Եվ եթե մահը նրան էլ տարել է,-
Սրա վրա ե՞ս պիտի սաղմոս կարդամ...

Գ. ՑԱՅԳԵՐԳ

Հոգեհանգի՜ստ, հոգեհանգի՜ստ...
Վախվըխելով գիշերն է գնում,
Ճամփան մութ, ինքը հետիոտն.
Երկնքում մեռած լուսինն է քնում,
Հառնում է խավարը՝ որպես մահվան բոթ...
Շուրջը լռություն, անդո՜ր ու հանգի՜ստ.
Լռել է անգամ չղջիկը անտուն.
Չի կըվվում չար բուն ավերակ վանքից,
Ծղրիդն է լռել մոտիկ բացատում...
Լուսնի դիակը ծածկել է ամպը,
Ամայացել է մարդաշատ ճամփան...
Սարսափն է գերում ինձ քիչ-քիչ.
-Մի՞թե միմիայն ես եմ վրիպել չար մահվան աչքից...
Հոգեհանգի՜ստ, հոգեհանգի՜ստ...

Դ. ԱՅԳԵՐԳ

Արևելքին խոցխոցում են լուսո սլաքները,
Քնած բնությունը աչքերն է ճմլում,
Թփուտներում թևահարում են հավքերը,
Լողանում են կարապները ջրում...
Արևելքը ահա խնդություն է ցրում,
Պարզվում են երկնքի աչքերը
Եվ լուսո արցունք են ծորում...
Այս անգամ ես եմ զարթոնքի այդ պահին
Քնել խոր խոհերիս խորքում...
-Բայց ինչո՞ւ են կարապները մահվան երգ երգում...

Ե. ՍԻՐԵՐԳ

Երկինքը խնդություն է ցողում,
Կոկոն վարդը բացում է թերթեր,
Ջեփյուռից վարդենին դողում,
Օրորվում է թեթև...
Արևը վարսերը նետել,
Լվանում է հորդ գետի ջրում,
Արևը վարսերը փետել,
Երկրի վրա է ցրում...
Ես նստած սիրերգ եմ գրում
Ու սիրտն իմ խնդությամբ թաց է,
Բայց ահա մեկը սև բոթ է բերում.
-Գետում խեղդըվեց սիրածըդ...

Զ. ՄԻՋՕՐԵԻ ԵՐԳ

Զենիթում մեխվել է արևը,
Կարծես ննջում է, կամ մեռած է.
Տափաստանում կյանքը մարել է -
Կենդանությունն է վերացել...
Արևը ջերմություն է շնչում.
Տափաստանն է անջրդի քարափ...
Օդում ոչ մի թռչուն,
Լճում ոչ մի կարապ...
Եթե գտնվի մեկը՝ պարապ,
Այս մեռյալ, մահառիթ ժամին,
Թե վարարի հորդառատ անձրևե տարափ,
Թե բարձրանա հոնդուն քամին,-
Հենց այդ երկունքի ժամին
Կմեռնեմ ես - անդարձ ու հանգիստ,
Քանզի եթե իջնող նժար կա մի,
Ապա կա բարձրացող մի այլ նժար...

Եվ հոգիս համաձայն է ու սիրտս՝ հոժար,
Որ ծնվողը մեռնողին կարդա հոգեհանգիստ Միշտ, Միշտ...

Է. ԵՐԵԿՈՅԱՆ ԵՐԳԸ

Գլորվում է արևը ներքև.
Դեպի մահվան իր մահիճը...
Մեռնող շողերը երկիրն են ներկել,
Ինչպես ներկում է ձեռքերն իր դահիճը:
Ու բեղմնաբեղուն դաշտերն ու ճահիճը,
Խոլական ծովը, երկինքն անագե,
Բարձրագահ լեռները՝ դեմքերին կավիճը,
Մեռնող արևի շողերն են հագել...
Մեռնում է արքան,
Հատնումով անգամ
Այնքա՜ն, օ՜, այնքա՜ն
Պայծառ ու հստակ, բոսոր, կրակե...
Եվ ո՞վ կարող է նորից - նոր ծագել
Նրա պես հստակ, նրա պես պայծառ,
Նրա պես հրկեզ, նրա պես անծայր...
Եվ իջնում է արդ խավարը դաժան...
Երկնում առկայծող աստղերը հազար
Չեն փոխարինում պայծառ արևին...
Մեզանից հեռու, օտար են նրանք
Եվ չեն պարգևում մեզ հուր ու կրակ...
-Թող միշտ արևը երկրին արևի...

Ը. ՊԱՐԵՐԳ

Փչում է քամին կատաղի խանդով,
Անծայր դաշտերում ահեղ հոնդում.
Ու ցողունները մի խոր եռանդով
Պարում են անդուլ անտառում, հանդում:
Պարերգ է սուլում այս քամին անտուն.

Պարը դառնում է խոլ ու խելագար -
Ճկուն թեքում է սիգապանծ բարդուն,
Սեգ կաղնուն գետնում այնպես խոլաբար...
Փոշու ամպերով ծածկում է ճամփան,
Վերև է հառնում ջրերը գետի,
Շոյում է քնքուշ և մտերմաբար
Ե՛վ լեռ, և՛ քարափ, և՛ մարգագետին...
Ապա դու փորձիր, ընկեր իմ, գտի՛ր,
Թե ի՞նչ է բերում այս պարը մոլի.
-Նա կամ գոռ ծնունդ աշխարհ կնետի,
Կամ մահ կարող է բերել բոլորին...
...Օ՜, մի համառիր, պոե՛տ, հավատա,
Վակխանալիա չէ, մահվան պարն է դա...
Թ. ՎԵՐՋԵՐԳ
Այն, որ անտես է, այն, որին չեն տեսնում քո աչքերը,
Այն, որ քնած է միայն, դու մեռա՞ծ ես կարծում...
Չգիտե՞ս միթե, որ յուրաքանչյուր տրված հարցում
Միշտ հառնում են պատասխան ծնող անցքերը:
Այդպես քնածը արթնությամբ իր հորիզոնն է բացում,
Հորիզոն, որ կյանք է և ուր խաչվում են զույգ հայացքները,
Զույգ հայացքները մահվան և կենդանության...
Եվ այն, ինչ մեռած է թվում այնտեղ՝ վերև է համբարձում
Ինչպես անհնարին թվացող պատասխանը՝ տրված հարցում:
Ուրեմն սպասիր քնած, բայց մեռած թվացող նրա հարության,
Նրա, որ խաչվել է, համբարձվել է հենց նոր,
Նրա, որ Քրիստոս չէ... Քրիստոս-ցնորք...
Այդ կյանքն է հավիտյան կենդանի, հավիտյան նոր...
Եվ դո՛ւ, պոետ, որ քնել, արթնացել ես արդեն,
Ինչո՞ւ ես շվարած կանգնել...
Երգիր հարության քո երգերը,

Երգիր անկաշկանդ, անարգել,
Պոետ - երկրային անգել...